ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

մայիսի 2022 թվականի № -Ա
ք. Երևան

«ՍԻՆԳԼ ԳՈՌ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱՁԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 21-Ի №267Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի հուլիսի 21-ի №267Ա որոշմամբ երկարաձգվել է «ՍԻՆԳԼ ԳՈՌ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված «Սանդաղբյուր» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0212 լիցենզիայի ժամկետը, իսկ որոշման 3-րդ կետով Ընկերությունը պարտավորեցվել է վեցամսյա ժամկետում՝ մինչև 2022 թվականի հունվարի 22-ը, Հանձնաժողով ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած Կայանի ճշգրտված ելքերով և ջրառի ու ջրահեռացման նիշերով նախագիծը (նախագծի փոփոխությունները)՝ դրական փորձագիտական եզրակացություններով, իսկ դրա անհրաժեշտության բացակայության դեպքում՝ համապատասխան հիմնավորումներ,

բ) Ընկերությունը 2022 թվականի հունվարի 17-ի №8 գրությամբ հայտնել է, որ նախկին և նոր ջրօգտագործման թույլտվության մեջ նիշերը նույնն են, իսկ նոր ջրօգտագործման թույլտվության մեջ մայիս և հունիս ամիսներին կատարված փոփոխությունը պայմանավորված է նոր ջրագծի ավելի հզորացմամբ կամ լրացուցիչ ջրագծի կառուցմամբ, որը, սակայն, տվյալ հատվածի սահմանային լարվածության պատճառով ժամանակավորապես սառեցվել է: Ընկերությունը հայտնել է նաև, որ

մյուս 10 ամիսներին ջրի քանակությունը էական փոփոխության չի ենթարկվել՝ միաժամանակ տեղեկացնելով, որ ընթացքի մեջ է ավելի հզոր նոր տուրբինի և գեներատորի ձեռքբերման գործընթացը: Ի հավաստումն, որ նիշերը նախկին և նոր ջրօգտագործման թույլտվության մեջ նույնն են, Ընկերությունը գրությամբ ներկայացրել է հին և նոր ջրօգտագործման թույլտվությունները և Կայանի սխեմատիկ հատակագիծը,

գ) Հանձնաժողովը 2022 թվականի փետրվարի 11-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ 2021 թվականի հուլիսի 21-ի №267Ա որոշման 3-րդ կետով սահմանված պարտավորության հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

դ) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2022 թվականի փետրվարի 18-ի №9 գրությամբ վերահաստատել է իր 2022 թվականի հունվարի 17-ի №8 գրությամբ ներկայացված հիմնավորումները,

ե) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է 2021 թվականի հուլիսի 21-ի №267Ա որոշման 3-րդ կետի պահանջը, այն է՝ չի ներկայացրել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած Կայանի ճշգրտված ելքերով և ջրառի ու ջրահեռացման նիշերով նախագիծը (նախագծի փոփոխությունները)՝ դրական փորձագիտական եզրակացություններով, իսկ դրա անհրաժեշտության բացակայության դեպքում՝ համապատասխան հիմնավորումներ: Ընկերությունը ներակայացրել է միայն իր դիրքորոշումը առ այն, որ ջրառի և ջրահեռացման նիշերը չեն փոփոխվել, իսկ փոփոխված ելքով նոր նախագծի կազմման աշխատանքները անորոշ ժամկետով կասեցվել են, ինչը, սակայն, չի կարող դիտվել բավարար հիմնավորում, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 28-րդ, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Հանձնաժողովի 2021 թվականի հուլիսի 21-ի №267Ա որոշման 3-րդ կետի պահանջի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:

2. Հանձնաժողովի 2021 թվականի հուլիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի հուլիսի 21-ի №157Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու և «ՍԻՆԳԼ ԳՈՌ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը նախազգուշացնելու մասին» №267Ա որոշման 3-րդ կետում «վեցամսյա» բառը փոխարինել «մեկ ամյա» բառերով:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, իսկ 2-րդ կետի գործողությունը տարածվում է 2022 թվականի հունվարի 22-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
մայիսի 2022թ.